

Ողբ Եդեսիոյ

Lament over Edessa

Գրիգոր Տղայ – Krikor Dgha

Ահա ձայնեմ ձայն ողբագին,
Behold! I exclaim the lamentable sound,
Կական բառնամ արտասուագին,
I lament all in tears,
Զձեռս ձգեմ յերկին վերին,
I leave my strength to the heaven above,
Դառնամ խօսիմ յերկիր ներքին,
I turn to speak to the earth below,
Կոչեմ զերկուսս ընդ միակին,
I call the two instead of one,
Լինել սգակից իմոյս անձին,
To become the mourner of my being,
Պատմեմ զվիշտս իմ տրտմագին,
I narrate my melancholic anger
Ասեմ զցաւս իմ լալագին:
I tell of my weeping pain.

Ներսէս Շնորհալի – Nerses Shnorali

Ողբացէ՛ք, եկեղեցիք, հարսունք վերին առագաստի,
Lament, O Churches, Brides of the upper room,
Քորք եւ եղբարք իմ սիրելիք, որք յընդհանուր կողմ աշխարհի.
My beloved sisters and brothers, you, who can be found on all sides of the earth,
Քաղաք եւ գետիք առհասարակ, ազգ եւ ազինք, որ էք յերկրի,
Cities and villages all together, peoples and generations all over the world,
Նախ առաջին ձեզ բարբառիմ՝ արփիափայլ եւ հրաշալի,
First and foremost I will speak to you, who are brilliant and wonderful,
Արբուցանել զսիեզերս ամետաբեր բղխմամբ բանի.
Drenching the universe with the heralding effusion of the Word,
Առ որս խօսիմ աղերսալի, դուք լսեցէք լալոյս ձայնի:
You, to whom I speak filled with ill tidings, listen to my weeping voice.

Սուրն անողորմ անօրինի, որ մեր արեանս է ի սովի,
The merciless sword of the infidel who hungers for our blood,
Որ չէ յագեալ եւ ոչ յագի մինչեւ ի գալ կատարածի,
Was not satisfied and will not be so until the fulfilment of time,
Նոյն նա եհաս ուրեմն ի քեզ, որպէս յիս՝ յայս ժամանակի,
So, it achieved the same with you, as with me, at this time.
Հնձեաց զօրայն յանդաստանի, կանաչաւոր ի հասակի,
It reaped the corn on the fields while still green,
Զայգին իլեաց արմատաքի, մերկեաց յոստոցն զձիթենի:
It cut the vine off from its root, it stripped bare the olive tree's branches.

Եւ արարին զքեզ գերի, քան զՍաղիմ 'ի այլ անելի:
And they captured you, like Salem and even worse.
Վասն այսորիկ, ո'վ անձկալի, որ ես ներհուն այսր ամենի,
Because of this, O desirable one, you, who are well instructed in this matter,
Ի քոյն յայնժամ խիստ աղէտի ծանիր եւ զիմս ողորմելի
From your terrible disaster of those days my own tragedy was born

Լացէ՛ք, լացէ՛ք բարձր ի ձայնի, զիս ողբացէ՛ք կողկողալի,
Weep! Weep, with risen voice! Lament over me, lost in groans!
Ես՝ Եդեսիա, Ուռհա քաղաք, որդեկորոյս, որբ եւ այրի,
I, Edessa, the city of Urha, bereft of my children, orphan and widow,
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի, կականալիր 'ի ողորմելի:
Call on you with a woman's voice, plaintive and full of misery.
Զքօղս ի գլխոյս մերկանալով, զիմ պատառեմ ծածկոյթ զարդի,
I remove the veil from my head, I cut up my embellished covering,
Քարամբք ծեծեմ զկուրծս սրտի, բախեմ զերեսս իմ ապտակի
I beat my breast, my heart with stones strike my face with punches,
Նստիմ ի սուգ ի տան մթի, որպէս օրէն է սգաւորի,
Sit down and mourn, at home, all dark, as is allowed to one who mourns,
Եւ փոխանակ որդան զգեստի՝ սեաւ զգենում գոյն տխրելի,
And instead of a scarlet dress, black I don, colour of grief,
Հեղում արտօսք անչափելի, յորդ եւ առատ նման գետի:
I shed uncounted tears, abundantly, profusely, riverlike,

Ես մայր էի բազմորդութեան, անթիւ ծնայ դուստր եւ որդի
I was mother of a multitude of children, countless sons and daughters did I bear,
Զորս մայրաբար դիեցուցի ի ստեանց իմոց կաթն արբուցի
Whom I suckled as a mother does, drenched them with the milk from my breasts,

Յորոց հայցեմ յանդ լինելոց՝ եւ զիս յիշել՝ տարտամ ոգւոց
I implore those who are there, also to remember me, wavering in spirit,
Զլոկ համանուն Մեծին Հայոց զներսէս՝ բացեայ բարեաց գործոց,
Who only as namesake am comparable to that Nerses of Greater Armenia, I, deficient in good works,
Եւ շառաւիղ նորին ոստոց, բայց ոչ նման գոլ արմատոց,
And a sprout of his branches, but who am not like his roots,
Զողբերգական բանիս գրող՝ առ ի սփոփանս տրտմեցելոց,
The composer of this poem of lamentation, for alleviation of the afflicted,

Ո՛չ առաւել եւ ո՛չ նուազ, այլ ի յոտին բերեալ չափոց,
Not more, and not less, but as it has been put in measured feet,
Յոր վայելեա սիրով սոցունց, լրմամբ տառիս քո խնդրելոց,
Relish it with the love for these persons, now that this writing is completed, at your request,
Զոր աստանօր եմ յանգելոց՝ զգիրս բանիս վճարելոց,
Which here I am to bring to an end, by finishing the writing of this poem,
Ի փառս Հօր աւարտելոց, հոգւոյն 'ի Որդոյն կատարելոց
Concluding it for the glory of the Father, completing it for the glory of the Son and the Spirit.

Գրիգոր Տղայ – Krikor Dgha

Ահա ձայնեմ ձայն ողբագին,
Behold! I exclaim the lamentable sound,
Կական բառնամ արտասուագին
I lament all in tears,
Զձեռս ձգեմ յերկին վերին,
I leave my strength to the heaven above,
Դառնամ խօսիմ յերկիր ներքին,
I turn to speak to the earth below,
Կոչեմ գերկուսս ընդ միակին,
I call the two instead of one,
Լինել սգակից իմոյս անձին,
To become the mourner of my being,
Պատմեմ զվիշտս իմ տրտմագին
I narrate my melancholic anger
Ասեմ զցաւս իմ լալագին:
I tell of my weeping pain.

ՎԵՐՋ

End